



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

ապրիլի 2018 թվականի N°Ա  
քաղ. Երևան

**«ՎԵՈՒԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՏՈՒԳԱՆՔ  
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա. 2018 թվականի փետրվարի 5-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է դիմել քաղաքացի Նիկոլայ Հարությունյանը՝ հայտնելով, որ 2017 թվականի մարտի 31-ին դիմել է «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղի Ավ. Իսահակյան փողոցի N°3 տան նոր համակարգն ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միանալու համար, սակայն սահմանված ժամկետում միացման պայմանագիր կնքելու առաջարկություն չի ստացել: Ընկերությունը ամիսներ անց միայն 2017 թվականի նոյեմբերի 13-ի գրությամբ ներկայացված պարզաբանումներում միացման պայմանագրի կնքման գործընթացը կապել է նշված հասցեում ապօրինի ջրամիացման առկայության հետ,

բ. 2018 թվականի փետրվարի 9-ին Հանձնաժողով է դիմել Արզուման Հարությունյանը՝ հայտնելով, որ 2018 թվականի հունվարի 9-ին դիմել է Ընկերություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղի 3-րդ փողոցի N°50 տան նոր համակարգն ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միանալու համար, սակայն սահմանված ժամկետում տեխնիկական պայմաններ չի ստացել, որի առնչությամբ ընկերության կողմից ստացել է բանավոր պատասխան, որ դիմումը Ընկերության աշխատակցի անփութության պատճառով չի մուտքագրվել և պետք է սպասել,

գ. Հանձնաժողովը 2018 թվականի փետրվարի 7-ի N°ԱՎ-261Դ և փետրվարի 12-ի N°Ավ-301Դ գրություններով դիմել է Ընկերություն վերը նշված խնդիրների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով,

դ. հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը վերոնշյալ փաստերի ուսումնասիրության նպատակով 2018 թվականի մարտի 5-ից և 15-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթներ, որոնց մասին Ընկերությունը տեղեկացվել է Հանձնաժողովի 2018 թվականի մարտի 5-ի ԱԲ-447Զ և մարտի 15-ի ԱԲ-502Զ գրություններով,

ե. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղի Ավ. Իսահակյան փողոցի №3 հասցեում նոր միացման խնդրի առնչությամբ Ընկերությունը 2018 թվականի փետրվարի 16-ի №ԿԼ/2828/ և մարտի 15-ի №ԿԼ/5112/ գրություններով հայտնել է, որ նոր համակարգի կառուցման նպատակով Ընկերության մասնագետների կողմից նշված հասցեում կատարված տեղագնման արդյունքում հայտնաբերվել է ապօրինի ջրամիացում: Այդ ընթացքում ապօրինի ջրօգտագործման փաստի արձանագրման և և դրա հետ կապված այլ ընթացակարգերի ապահովման վերաբերյալ իրավակարգավորումներ առկա չեն եղել, հետագայում միայն՝ 2017 թվականի հունիսի 1-ին, ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության №658Ն որոշումը: Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններում (այսուհետ՝ Կանոններ) նման դեպքերում միացման դիմումի քննարկման ընթացակարգ և ժամկետներ սահմանված չեն: Մինչդեռ տեղագնության կատարումը, ապօրինի ջրօգտագործման փաստի արձանագրումը, համապատասխան հաշվարկի ներկայացումը և ջրանջատումն իրենցից ներկայացնում են ժամանակատար գործընթացներ, ինչը հնարավոր չէ ապահովել 20 (նախկինում՝ 15) աշխատանքային օրվա ընթացքում: Ամփոփելով վերը նշվածը՝ Ընկերությունը պնդել է, որ թույլ տրված խախտումը հիշյալ հարաբերությունների ոչ հստակ կարգավորման արդյունք է: Սույն թվականի փետրվարի 15-ին Նիկոլայ Հարությունյանին արդեն ներկայացվել է միացման պայմանագրի կնքման առաջարկ, և խնդրել է կարճել հարուցված վարչական վարույթը կամ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի հիմքով կայացնել բարենպաստ վարչական ակտ,

զ. Արմավիրի մարզի Այգեկ գյուղի 3-րդ փողոցի №50 հասցեում նոր միացման խնդրի առնչությամբ Ընկերությունը 2018 թվականի փետրվարի 19-ի №ԿԼ/2831/ և մարտի 23-ի №ԿԼ/6036/ գրություններով հայտնել է, որ ջրամատակարարման նոր համակարգ կառուցելու նպատակով տեխնիկական պայման ստանալու վերաբերյալ քաղաքացի Արզուման Հարությունյանի դիմումին սահմանված կարգով ընթացք չի տրվել Ընկերության աշխատակցի

կողմից թույլ տրված տեխնիկական վրիպակի պատճառով, որի պարագայում Ընկերության մեղքը բացակայում է: Տեխնիկական խնդրի շտկումից հետո, դիմումը ստացել է բնականոն ընթացք, և դիմողին սույն թվականի փետրվարի 19-ին տրամադրվել է համապատասխան տեխնիկական պայմանը: Հաշվի առնելով նշվածը՝ Ընկերությունը խնդրել է կարճել հարուցված վարչական վարույթը կամ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի հիմքով կայացնել բարենպաստ վարչական ակտ,

է. Կանոնների 16-րդ կետի համաձայն՝ նոր միացման համար դիմումն ստանալու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մինչև 2017 թվականի հուլիսի 13-ը գործող խմբագրությամբ նույն կետի համաձայն՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, մատակարարը դիմող անձին է ներկայացնում միակողմանի կնքված միացման պայմանագիր կամ տեխնիկական պայմաններ,

ը. հարուցված վարչական վարույթների շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կանոնների 16-րդ կետի պահանջը՝ դիմող անձին տեխնիկական պայմանների և միակողմանի կնքված միացման պայմանագրի ներկայացման ժամկետը, ինչը Կանոններով ամրագրված պարտավորությունների անբարեխիղճ կատարման արդյունք է: Ինչ վերաբերում է Ընկերության ներկայացրած փաստարկներին, ապա հանձնաժողովը դրանք համարում է լիովին անհիմն: Մասնավորապես, խմելու ջրի ապօրինի սպառման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործման հայտնաբերման դեպքում համապատասխան գործընթացները որևէ կերպ չեն առնչվում և չեն կարող առնչվել նոր համակարգը Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման հարաբերություններին, նշված գործընթացների համար օրենսդրությամբ սահմանված են միմյանց հետ աղերս չունեցող էապես տարբեր կարգավորումներ: Հետևաբար Ընկերության պնդումն առ այն, թե իբրև Կանոնների 16-րդ կետով ամրագրված ժամկետի խախտումն արդյունք է ապօրինի ջրօգտագործման հարաբերությունների ոչ հստակ կարգավորման, անհիմն է ու անտրամաբանական:

Նման պարագայում Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթների կարճման, առավել ևս Ընկերության նկատմամբ բարենպաստ վարչական ակտ ընդունելու հիմքերը բացակայում են,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 3-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 16-րդ կետը խախտելու համար Ընկերությանը տուգանել՝ 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Ընկերությանը՝

- 1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում նշված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
- 2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան  
ապրիլի 2018թ.